ԹԱՆԶԻՄԱԹ ԵՎ ՀԱՅԵՐ

Պրոֆ. Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ (Բուխարեստ)

Սուլթան Մեջիդ 18 տարեկան պատանի մըն էր, երբ 1839-ին գահ կբարձրանար Մահմուդ Բ-ի տեղ։ Ալ-Օսմանի գահուն վրա նստելու կուգար տղեկ մը կայսրության համար փոթորկալից պահու մը, երբ որևէ ատենե ավելի զորեղ ձեռք մը պետք էր երկրին գլուխ՝ որպեսզի իսպառ չկքիր կայսրության արդեն վաղուց խարխլած շենքը։

Սուլթան Մեջիդ երկու հարց ժառանգ ստացավ հորմեն։ Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշային դեմ մղվող պատերազմը նախ, և հետո՝ բարենորոգմանց խնդիրը, զոր Մահմուդ Բ ծրագրած, բայց չէր կրցած լրման հասցնել։ Նոր սուլթանը ի վիճակի չէր ստանձնելու այդ փշոտ ժառանգությունը, այսինքն ո՛չ լուծելու արտաքին բարդությունները, որոնք պլլված էին Եգիպտոսի տագնապին, ո՛չ ալ օրվան պետական մարդիկը համախմբել երկիրը բարեկարգելու մտածումին շուրջ։

Ու սակայն այս նոր մարդուն պիտի վիճակեր առնելու ամենեն հանդուգն քայլը։

Թանզիմաթը, զոր Մեջիդ պիտի հռչակեր 1839-ին, գահ բարձրանալեն հազիվ քանի մը ամիս հետո, թվական մը պիտի բանար Թուրքիո պատմության մեջ և իր անունը ևս պիտի մտցներ շարքը մեծ սուլթաններուն։ Պատմությունը անոր պիտի վերագրեր ակամա հայրն եղած ըլլալ այն մեծ դեպքին, որ 1839 նոյեմբեր 3-ին Գյուլհանեի մեջ կարդացված հրովարտակն էր և որ Թուրքիո առջև պիտի բանար հույսերու, կամ ավելի ճիշտ պատրանքներու նոր շրջան մը։

Բայց սուլթան Մեջիդ գործիք մըն էր միայն այս դեպքին մեջ։ Իր ետին ուրիշ մարդ մը կար։ Մուսթաֆա Ռեշիդ փաշան էր ան։ Ան է թանզիմաթին բուն հեղինակը, ու ան էր, որ կբանար պատրանքներու այդ նոր շրջանը։

Մուսթաֆա Ռեշիդ Պոլիս ծնած էր 1799-ին։ Մեծ վեզիր Սեյիդ Ալի փաշայի իբր հետևորդ Մորա ղրկված էր 1818-ին կնքապահի (մյոհյուրդար) պաշտոնով, երբ դեռ հազիվ 19 տարու էր։ Հետո արագ-արագ ոստոստելով պաշտոնե պաշտոն՝ սկսեր էր ուշագրավ դառնալ իր շրջապատին մեջ։ 1828-ին մեծ վեզիր Սելիմ Մեհմեդ փաշայի մոտ ամիդչիի օգնական էր։ 1830-ին Փերթեվ փաշայի իբրև հետևորդ ղրկված էր Եգիպտոս, 1831-ին ամիդչի կարգված էր, իսկ 1833-ին Եգիպտոս ղրկված էր դարձյալ այս անգամ Դամադ Խալիլ փաշայի հետ մեկտեղ։

Հազիվ 35 տարեկան կար, երբ 1834-ին դիվանագիտական ասպարեզ մտավ։ Այդ տարին էր, որ իբրև դեսպան ուղարկվեցավ Փարիզ և Լոնդոն, և հետո խորհրդական (մյուսթեշար) կարգվեցավ արտաքին գործերու պաշտոնատան։ Իսկ 1836-ին ինքն էր, որ ուղղակի պիտի ստանձներ արտաքին գործերու ղեկը պետության կենտրոնին մեջ, այդ պաշտոնեն դարձյալ Լոնդոն ղրկվելու համար քիչ հետո իբրև դեսպան։

Այս մարդուն պիտի վիճակվեր անա գլխավոր խորհրդականը դառնալ սուլթան Մեջիդին, երբ ան, դեռ պատանի, կուզար գրավելու սուլթաններու գահը 1839-ին, և անոր թելադրիչն ըլլալ հանդուգն այն քայլին մեջ, որ Թանզիմաթի հրատարակությունն էր գահ բարձրանալի քիչ հետո։

Հակոբ Մելիք, հայտնի հայ ճարտարապետը, որ, ինչպես պիտի տեսնենք, Մուստաֆա Ռեշիդ փաշան մոտեն ճանչցած է, որքան անոր Փարիզի դեսպանության օրերուն՝ երբ ինքն ալ ուսանող էր Փարիզ, նույնքան անոր Պոլսո գործունեության ընթացքին՝ երբ ինքն ևս թուրք մայրաքաղաքը կգտնվեր, անոր ելանին և գործունեության ևս լայն բաժին կհատկացնի այն գրքին մեջ, զոր 1856-ին Փարիզ հրատարակեց՝ Արևելքի դեպքերը ներկայացնելու առթիվ Արևմուտքի հանրային կարծիքին[1]։

Հիշելով Ռեշիդ փաշայի դիվանագիտական գործունեությունը սուլթան Մահմուդ Բ-ի իսկ օրով, Մելիք կգրե.

«Ռեշիդ իր քաղաքական ստաժը բրած էր արդեն սուլթան Մահմուդ Բ-ի օրով։ Երբ այս սուլթանը ուզեց Արևելքը Արևմուտքին կցել սերտ կապով մը և իր երկիրը դուրս հանել այն մեկուսացումեն՝ ուր Վիեննայի կոնգրեն զետեղած էր զայն, բոլոր ձայները անոնց, որոնք կմերձենային իրեն, կմատնանշեին Ռեշիդ բեյը, դեռ երիտասարդ, որ գործերու գործնական ճանաչման մը կմիացներ շատ խնամված կրթություն մը։ Այս մարդը, առանց առարկության, ամենեն հմուտն էր Բ. Դռան բոլոր քյաթիբներուն. ան գիտեր ֆրանսերեն լեզուն»։

Մահմուդ Բ-ի մահը պահ մը ընդհատեց երիտասարդ դիվանագետին առաքելությունը։ Սակայն նոր դեր մը վերապահված էր իրեն նոր սուլթանին օրով։

«Երբ թուրք պատվիրակը վերադարձավ իր առաքելությենեն,—կգրի Մելիք,— սուլթան Մահմուդ մեռած ըլլալով, կայսրության բոլոր մեծ պաշտոնատարները, համակամ, թելադրեր էին երիտասարդ սուլթան Մեջիդին քաղաքական գործերու վարչությունը անոր թողուլ իբրև միակ մարդը, որ կրնար պետությունը փրկել այսքան դժվարին պայմաններու մեջ։ ...Պետք էր Թուրքիան ավելի առաջ մղել հառաջադիմության ճամփուն մեջ... Ստիպողական էր Եվրոպայի հանրային կարծիքը շահելու համար, անհրաժեշտ էր ընկերական երաշխիքներ տալ և Թուրքիո ժողովուրդներուն քաղաքական գոյությունը ապահովել»[2]։

* * *

Թոփ-Քափուի պալատին պարտեզներուն մեջ, որ ծանոթ են Գյուլհանեի անունով, 1839 թ. նոյեմբերի 3-ին Մուսթաֆա Ռեշիդ փաշան կարդաց սուլթանական հրովարտակը, որ կոչված էր պատմական մնալու զոնե իր տված խոստումներով և իր հարուցած ազմուկով, և պիտի ճանչցվեր Թանզիմաթի անվան տակ։

Սուլթան Մեջիդ երկիրը կուզեր ազատել ազետալի կացությենեն։ Ան կհավատար թե երկրին աշխարհագրական դիրքը, հողին արգասարերությունը, բնակչության ընդունակությունները նպաստավոր պայմաններ էին և պիտի կարենար անոնց շնորհիվ ապահովել կայսրության բարգավաճումը։ Բայց այդ բարգա-

[1] A. Melik, L'Orient devant l'Occident, Paris. 1856.

[2] Նույն տեղում, էջ 29—31։

վաճումը հնարավոր էր միայն նոր հիմնարկություններով, որոնք պիտի երաշխավորեին բարվոք վարչություն մը երկրին մեջ։

«Սույն հիմնարկությունները,— կ՚ըսվեր Ֆերմանում,— պետք է ձգտեն Երեք բանի. ա) երաշխավորություններ, որոնք կատարելապես ապահովեին մեր հպատակներուն կյանքը, պատիվն ու ինչքը. բ) կանոնավոր եղանակ մը տուրքերու բաշխման և գանձման. գ) կանոնավոր եղանակ մը նույնպես զորակոչի և զինվորական ծառայության համար»։

Ֆերմանը զատ-զատ կանդրադառնար հետո այդ երեք նպատակներուն և զանոնք իրականացնելու անհրաժեշտության։

«Ահա թե ինչու ասկե հետո ամեն մեղադրյալ պետք է դատվի հրապարակով, մեր աստվածային օրենքին համաձայն, հարցաքննություն և քննություն հետո և մինչև որ դատը տեղի չունենա օրինավորապես, ոչ ոք իրավունք պիտի ունենա, գաղտնի թե հրապարակով, վերջ տալ ուրիշի մը կյանքին, թունավորմամբ կամ ուրիշ որևէ տանջանքով։ Թույլ չպիտի տրվի ոչ ոքի դպիլ ուրիշի մը պատվույն՝ ով ալ ըլլա ան։

Ամեն մարդ իրավասու է իր որևէ տեսակի սեփականությունն ունենալ և զայն վայելել կատարյալ ազատությամբ, առանց որևէ մեկեն արգելքի հանդիպելու։ Նույնիսկ եղեռնագործի մը անմեղ ժառանգորդները չեն կրնար զրկվել իրենց օրինավոր իրավունքներեն և եղեռնագործին ինչքերը չեն կրնար հարբունիս գրավվել։

Կայսերական այս արտոնությունները կտարածվեն մեր բոլոր հպատակներուն վրա, և ինչ կրոնքի և աղանդի ալ պատկանին, պիտի օգտվին անոնցմե։ Մեր կողմե լիակատար ազատություն կշնորհվի, ուրեմն, կայսրության բոլոր հպատակներուն՝ ինչ կվերաբերի իրենց կյանքին, պատվույն և ինչքին, ինչպես որ կպահանջի մեր օրենքին նվիրական բնագիրը...»։

Բարենորոգության բոլոր մյուս փորձերուն պես, որոնց ականատես եղավ վերջին մեկուկես դարը Թուրքիո մեջ, թանզիմաթը խախուտ էր իր հիմքեն իսկ։ Ան կստեղծվեր տեսակ մը հարկադրանքի տակ։

Թանզիմաթի շրջանով զբաղվող գրեթե բոլոր հեղինակները, թուրք թե օտար, համաձայն են կետի մը մեջ. բարենորոգության այս փորձը ևս Թուրքիան ստիպված էր ընել ոչ թե ներքին պահանջ մը գոհացնելու համար, այլ կանխելու համար վտանգ մը դուրսեն։

Թուրք պատմաբան Ջեմիլ Բիլսել կգրե. «Թանզիմաթի հեղինակները ուզեցին իրերին բարեկարգություն տալով Եվրոպայի մեջ լավ տպավորություն մը թողուլ։ Այս մասին տարակույս չկա։ ...Մուսթաֆա փաշա, որ Փարիզի և Լոնդոնի իր դեսպանությանց միջոցին շփման մեջ մտած էր Եվրոպայի հետ, անշուշտ, կուզեր թանզիմաթը ճանչցնել Եվրոպայի և այսպիսով եվրոպական պետությանց մեջ Թուրքիո ի նպաստ լավ ազդեցություն մը առաջ բերել։ Ասիկա շատ բնական կդտնինք։ Նույնիսկ ավելի առաջ երթալով կրսինք, թե Մուսթաֆա Ռեշիդ փաշա, որ թանզիմաթը կանձնավորեր առաջին շրջաններուն, հասկըցած էր կայսրությունը շրջապատող վտանգները և մասնավորապես Եվրոպան ապահովցնելու և ստիպողաբար անոր վստահությունը շահելու անհրաժեշտությունը և այն կարծիքն ուներ, թե թանզիմաթը պիտի կարենար արևմտյան պետությանց ընդունել տալու պետքը օսմանյան պետության գոյությունը պահպանելու, որ մինչև այն ատեն կասրեր եվրոպական պետությանց ընտանիքեն

դուրս և ապահովցնելու, թե օգտակար տարր մրն է ան ընդհանուր հավասարակշռության մեջ»[3]:

Թանզիմաթի հետագա կյանքը ցույց տվավ, որ ան իրապես խորթ էր երկրին, որքան զանգվածներու մտայնության, նույնքան վարիչներու ներքին համոզման:

Թուրք նոր պատմաբան մը, որ Թանզիմաթի շրջանին ամբողջ հատոր մը հատկացուցած է Օսմանյան կայսրության պատմության նվիրված հատորներու շարքին մեջ, հատուկ հատվածի մը նյութ կրնե զժգոհությունները, որոնք այնուամենայնիվ ստեղծվեցան Թանզիմաթի շուրջ և իշխրնդոտ հանդիսացան անոր կիրարկությանը:

Առաջին հերթին զժգոհություններ իսլամական խավերու մեջ էր: «Սորենսկսավ այն հանգերգը, որ կհեղեղվեր Թանզիմաթեն առաջ փորձված նորությանց առթիվ.— ինչպե՞ս հավասարություն կրնա ըլլալ քրիստոնյա հպատակներուն և իսլամներուն միջև. արդեն պետության հետամնացությունը չի՞ բխեր քրիստոնյաներուն մեր շատ երես տալեն: Նման հարցումներով սկսած զժգոհությունը երթալով սկսավ աճել: ...Թանզիմաթի թշնամիները նույնիսկ քննադատեցին կառավարության համաձայնելը օտար պետությանց հետ նգիպտոսի խնդիրը լուծելու համար: Կխոսեին, թե սուլթանը «ֆրենգացած» է: Լուր կտարածեին, թե պետական ավագանին և մասնավորաբար Մուսթաֆա Ռեշիդ փաշա գյավուրներուն կողմե ծախու առնված մարդիկ են: Հին ռեժիմի մարդիկը և բռնապետության վարժված պետական երևելիները ևս իրենց կրցածին չափ Թանզիմաթին թշնամություն ընել սկսան: Մուսթաֆա փաշային առաջ եպարքոսության պաշտոն վարած մարդիկ, ինչպես Քոջա Խյուսրև փաշա, Ռաուֆ փաշա, Դարենդելի Եզզեթ Մեհմեդ փաշա, ուզեցին առ ոչինչ գրել Թանզիմաթի սկզբունքները: Կուսակալներեն շատերը այս փաշաներու հոգեբանությունն ունեին: ...Դամադ Սայիդ փաշա նույնիսկ չվարանեցավ սուլթանին առջև զժգոհելու, թե Ռյուշդեյի դպրոցներու մեջ աշակերտներուն ցույց տրված քարտեզները գյավուրի սովորություն են և թե շերիաթը թույլատու չէ անոնց: Թանզիմաթի հակառակ եղողներուն մեջ հին ռեժիմին նպաստավորվողներ ալ կային: Մյուլթեզիմները զժգոհ էին, որ վերցված են հին դրությունները՝ որոնցով դյուրին էր իրենց հարստանալ: Անոնք ևս սկսան տարաձայնել, թե Թանզիմաթին՝ քրիստոնյա հպատակներուն տված իրավունքները կհակասեն շերիաթին և պետական կյանքի մեջ գործադրվել սկսած կերպերը գյավուրի սովորություն են»[4]:

Թուրք պատմագիրը ակնարկելով քրիստոնյաներու զգացած զժգոհության Թանզիմաթեն՝ կրսե. «Գործին տարօրինակը այն է, որ Թանզիմաթը սկզբի շրջանեն քննադատվեցավ նաև քրիստոնյա հպատակներեն ոմանց կողմե»:

Մուսթաֆա Ռեշիդ փաշա, որ գլխավոր հեղինակն էր Թանզիմաթին՝ կանգնած էր ահավոր պատվարներու դիմացը, երբ կփորձեր մարմին տալ Գյուլհանեի մեջ տարփողված սկզբունքներուն: Անոր դյուրին էր եղեր Թանզիմաթը հռչակել տալ, բայց ի վիճակի չէր կիրարկության դնել դայն:

Իրականին մեջ սուլթան Մեջիդ տերը չէր իր հռչակած Թանզիմաթին: Ինք-

---

[3] Cemil Bilsel, Tanzimat, էջ 964.

[4] Էնվեր Զիյա Քարալ, Օսմանը թարիհի, Ե հատոր, Բ տպագրություն, Անկարա, 1961, էջ 189—190:

խաղալիք մըն էր միայն փաշաներու միջև մղվող պայքարին մեջ և ուժ չուներ պաշտպանելու իր ձեռնասունը: Կամքե և կորովե զուրկ այս վեհապետը՝ որ ոգևորության վայրկյանի մը մեջ ազատ էր ձգեր Ռեշիդ փաշան, որպեսզի թանզիմաթ մը պարգևի երկրին և որ ինքն իսկ ուխտեր էր կիրարկության դնել զայն, ի վիճակի չէր հիմա տեր կանգնել անոր:

Թուրքիո գործերուն նվիրված իր հատորին մեջ Հակոբ Մելիք, որ առիթ ունեցած էր մոտեն հետևելու Թուրքիո անցուդարձերուն, մանավանդ նախ 1848—1851 և ապա՝ 1853—1856 տարիներուն, երբ Պոլսո մեջ կգործեր իբրև ճարտարապետ, լայն տեղ կհատկացնե Թուրքիո ռեֆորմներուն շուրջ թուրք պետական վարիչներուն միջև մղվող պայքարին, լուսաբանելու համար Եվրոպայի հանրային կարծիքը և զգուշացնելու համար զայն խեղայթուրման փորձերեն, որոնք սկսած էին տեղի ունենալ: Այդ կարգի փորձերեն էր Մ. Դեստրիլեսի գիրքը[5], ուր դեպքերը խեղաթյուրված էին ի նպաստ Մեհմեդ Ալի փաշայի[6] և առհասարակ Մուսթաֆա Ռեշիդ փաշայի հակառակորդներուն:

Մելիք կպատմե, թե սույն Մեհմեդ Ալին, նախապես պալատական պարզ մանկլավիկ սուլթան Մահմուդի օրով, դիրքի հասած էր շնորհիվ պատերազմական նախարար Ռիզա փաշայի,— սա ևս սուլթան Մահմուդի նախկին մանկլավիկներեն մին,— 1844-ին բարձրացած էր մինչև մյուշիրության, իսկ հաջորդ տարին ամուսնացած սուլթան Մեջիդի փոքր քրոջ հետ և անվանված էր Քափուտան-փաշա, ու ավելի հետո, 1849-ին, սերասքեր, իր վարած բոլոր պաշտոններուն մեջ հռչակ հանած էր կեղեքումներով: Արդ, այս բացասական տիպարին էր, որ բախեցան Ռեշիդ փաշայի ջանքերը բարենորոգումներ մտցնելու համար երկրին մեջ: Պետական պաշտոնատարներուն մեջ ստվար խումբ մը կար անշուշտ, որ դեմ էր նախատեսված այդ ռեֆորմներուն. բայց անոնց մեջ ամենեն երկյուղալիներն էին նախ սույն Դամադ Մեհմեդ Ալի փաշան և անոր կողքին Մեհմեդ Էմին Ռեուֆ փաշան, ան ևս նախկին մանկլավիկ սուլթան Մահմուդի պալատին մեջ, որ մեծ վեզիրի պաշտոն վարած էր սուլթան Մահմուդի օրով և պիտի վարեր նաև հետո երկիցս Մեջիդի ատեն, 1842—1846 և 1851—1852:

Մուսթաֆա Ռեշիդ փաշայի դեմ մղված փաշաներու այս պայքարին մեջ ղեկը Մեհմեդ Ալի փաշային ձեռքն էր, որովհետև ան էր հեղինակությունը արքունիքեն ներս և ամենեն վայրագը միջոցներու ընտրության ատեն, ինչպես որ ամենեն անվախը՝ հափշտակությանց մեջ, որոնց դեմ ոչ ոք ի վիճակի էր ձայն բարձրացնելու և եթե նույնիսկ պատահեր, որ բողոքները պալատ հասնեին ու սուլթանը ստիպվեր պաշտոնե հեռացնել զայն՝ շուտով կհաջողեր ան իշխանության գլուխ գալ կրկին[7]:

Փաշաներու կռիվը թանզիմաթին դեմ ուրիշ աստառ ալ ուներ: Դուրսեն ալ խոժոռ նայողներ կային թանզիմաթին վրա: Ցարական Ռուսիան, առաջին հերթին, բարեկամ չէր ոչ Մուսթաֆա Ռեշիդին և ոչ ալ անոր ծրագրած բարենորոգումներուն:

Դյուրին է հետևցնել այս բոլորեն, թե ինչ խութերու դեմ ստիպված էր մաքառել Ռեշիդ փաշա թանզիմաթը իրականացնելու համար:

---

[5] M. Destrilhes, Confidences sur la Turquie, Paris.

[6] Չշփոթել Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշային հետ: Ռեշիդ փաշայի հակառակորդ Մեհմեդ Ալին առավելապես Դամադ Մեհմեդ Ալի փաշա կոչված է՝ սուլթան Մեջիդի քեռայրն ըլլալուն:

[7] Հ. Մ ե լ ի ք, Նշվ. աշխ., էջ 41:

Թանզիմաթը իր անմիջական պտուղը չտվավ։ Ճիշտ է՝ անոր տվածը երկրին խոստումներու ծրար մրն էր միայն, որ չէր կրնար իրականության վերածվիլ։

* *

Թանզիմաթը ուղղակի շփոթեցուց Պոլսո հայ ղեկավարները։ Անոնք բացառիկ հույսեր դրին առաջին իսկ պահին Գյուլհանեի մեջ կարդացված հրովարտակին վրա, հիմնական բարվոքում ակնկալելով անկե հայ ժողովուրդին համար և դայն հոչակելով թվական մը, ուրկե կոչված պիտի ըլլար սկսիլ դարթոնքի շրջանը հայ ժողովուրդին։

Փարիզի 1855-ի ցուցահանդեսին թրքական տաղավարին մեջ ցուցադրված իրերու կարգին կար նաև հայ արվեստագետի մը՝ Հարություն Պիլեղիկճյանի հղացած կոթողի մը ծրագիրը, կոթող, որ կոչված պիտի ըլլար թանզիմաթը հավերժացնել։

Հայ արվեստագետին հղացած սույն հուշարձանը վեցանկյունի կոթող մրն էր, որուն վեց երեսներուն վրա պիտի քանդակվեր թանզիմաթի ամբողջ պատմենը, Ֆրանսայի, Անգլիո և Թուրքիո բարեկամությունը պիտի հավերժանար՝ սույն երեք պետությանց խորհրդանշաններով և ասոնցմե դատ, ինչպես մատնանշված էր «Illustration» հանդեսը, «հաղթությամբ եղած պատերազմներուն և առնված ու պաշտպանված քաղաքներուն անվանցը հետ այնտեղ պիտի դրվեին այն քաջերուն անուններն ալ, որ Տաճկաստանի ինքնիշխանությունը ապահովելու համար բացված կռվույն մեջ ընկան»[8]։

Հարություն Պիլեղիկճյանի հղացած կոթողը, որուն մեկ նկարը դտանք Հակոբ Մելիքի արխիվին մեջ, կխորհրդանշի նաև միամտությունը, որով հայերը թանզիմաթը ողջույներ էին դայն բալասան կարծելով իրենց բոլոր ցավերուն։

Հայոց ղգացած այդ հափշտակության տպավորությունը երեք քառորդ դար հետո ալ դեռ կպահե Օրմանյան, ու չի վարանիր գրելու՝ սուլթան Մեջիդի անձը իր ընթերցողներուն ներկայացուցած ատեն.

«Ապտուլ Մեճիտ երիտասարդ կայսրը, յուր հոր սկզբունքներուն հավատարիմ ժառանգ և նոր դաստիարակությամբ զարգացած, փափաքեցավ ալ ավելի առաջ մղել յուր հոր սկսած հառաջադիմության և բարեկամության և արդար կառավարության ձեռնարկը և յուր ժողովուրդին բարեկեցության և հնարավորության սահմանին մեջ հավասարության և ազատության բարիքը ճաշակել տալ։ Այդ նպատակով կազմվեցավ Խաթթը Հյումայունը իբր թանզիմաթի կամ բարեկարգության հիմը»[9]։

Թանզիմաթը չէր կրնար չանդրադառնալ հայ կյանքին վրա։ Անուղղակի դրդիռ եղավ ան, որ թափ ստանա հայ ժողովրդական խավերու մեջ խմորվել սկսող շարժումը ազգային կյանքե ներս ալ։

Հայերը ևս չէին կրնար չիյնալ պատրանքներու ցանցին մեջ։

Պոլսո հայ ղեկավարության պատրանքներուն մեջ դեր կատարած կթվի ըլլալ Մուսթաֆա Ռեշիդ փաշան իր անձով։

---

8 «Մասյաց աղավնի», 1855, էջ 178։

9 Մ. Օրմանյան, Ազգապատում, Գ, էջ 3727։

Ռեշիդ փաշան իր շուրջը հայեր ևս ունեցավ, ոմանք ուղղակի իրը գործակից, ուրիշներ դանազան առիթներով իրեն հետ շփման մեջ։ Հայ դեմքերու կապը Թանզիմաթի հեղինակին հետ չէր կրնար փոխադարձ համակրություն ստեղծել և դրդիռ չըլլալ այն վստահության, որով հայերը Թանզիմաթը ողջունեցին առաջին օրեն, հավանաբար միշտ այն հույսով, որ Մուսթաֆա Ռեշիդ փաշան պիտի հաջողի կիրարկել զայն ինչպես հաջողեր էր զայն հոչակել տալ։

Ռեշիդ փաշայի հետ մտերմացած հայերուն մեջ պետք է հիշել առաջին հերթին Հակոբ Կրճիկյանը (1806—1865), իր շրջանին խոշոր հայ գործիչներեն մին, որ ոահվիրաներեն մեկը պիտի դառնար հայ կյանքի մեջ սկիզբ առնող սահմանադրական շարժման։ Իր ուսումը կատարելագործելու համար 1835-ին Փարիզ գացած Ռեշիդ փաշայի հետ թե՛ իբրև թարգման փաշային և թե՛ անոր զավակներուն իբրև ուսուցիչ, Կրճիկյան հետևած է հոն Սորբոնի դասերուն և հետո Ռեշիդ փաշայի միջնորդությամբ Բ թարգման անվանված Փարիզի օսմանյան դեսպանատան, փաշային զորավիգ հանդիսանալով անոր դիվանագիտական աշխատանքներուն մեջ։ Երբ Ռեշիդ փաշա Լոնդոնի դեսպան նշանակվեցավ 1839-ին, Կրճիկյանը միասին տարավ իբրև Ա թարգման օսմանյան դեսպանատան, քիչ հետո, երբ Ռեշիդ փաշա կարգվեցավ մեծ վեզիր, իբրև կցորդ վարելու համար դեսպանատան գործերը։ 1840-ին, Ռեշիդ փաշայի արտաքին գործերու նախարար եղած միջոցին, Կրճիկյան անոր խորհրդականն էր, ինչպես որ իբրև թարգման անոր պիտի ընկերակցեր, երբ 1841-ին փաշան Փարիզի դեսպան դառնար կրկին։ Անոր հետ ալ վերադարձավ Պոլիս՝ Լոնդոն, Վիեննա և ուրիշ քաղաքներ այցելելե հետո, իսկ 1846-ին, երբ Ռեշիդ փաշայի պիտի հանձնվեր նորեն օսմանյան կառավարության ղեկը՝ Կրճիկյան անոր թարգմանն ու խորհրդականը պիտի հանդիսանար, մեծ դեր ունենալով փաշային նախաձեռնած բարեկարգությանց մեջ[10]։

Հայ բանասեր մը Կրճիկյանի մասին կգրե նույնիսկ, թե՝ «իրապես եվրոպական զարգացմամբ առաջին օսմանյան պաշտոնատարն էր գրեթե ինք։ Իր ազդեցությունը Ռեշիդ փաշայի վերականգնիչ գործունեության մեջ խորապես զգալի եղած է, ինչպես պատրիարքարանի գործերը բարեկարգելու աշխատության մեջ»[11]։

Ավելցնենք, որ Հակոբ Կրճիկյան Փարիզի օսմանյան դեսպանատան խորհրդականի պաշտոնը վարեց Ռեշիդ փաշայի զավկին՝ Մեհմեդ Ջեմիլ բեյի դեսպանության օրով ալ։ «Մասյաց աղավնի» նկարագրելով Ջեմիլ բեյի անդրանիկ ընդունելությունը Նապոլեոն Գ կայսեր կողմե 1855-ին, դեսպանին հետևորդներուն մեջ կհիշե Կրճիկյանն ալ[12]։

Հմայքը, զոր Ռեշիդ փաշա ստեղծեր էր հայ շրջանակներու մեջ, չափով մը ան պարտական է իր հայ խորհրդականին։ Այդ հմայքը ավելի պիտի շեշտվեր, երբ Ռեշիդ փաշա, միշտ իր հայ խորհրդականին միջամտությամբը, պիտի ուզակցեր հայ կյանքեն ներս փորձված բարեկարգման քայլերուն ալ։

Մուսթաֆա Ռեշիդ փաշայի հիացողներուն մեջն էր նաև Հովսեփ Պեյրան, համբավավոր հայ բժիշկը (1825—1866), որ Ադրիանապոլիս ծնած և 1839-ին աշակերտած Սկյուտարի ճեմարանին, Փարիզի բժշկական համալսարանին հե-

---

10 Վահան Զարդարյան, Հիշատակարան. Ա. Կ. Պոլիս, 1910. էջ 103—104։

11 Արշակ Այպոյանճյան, Ընդարձակ օրացույց. Կ. Պոլիս, 1909. էջ 230։

12 «Մասյաց աղավնի», Փարիզ. 1855. էջ 190։

տեված էր Ռեշիդ փաշայի դեսպանության որով և 1850-ին դարձած էր Պոլիս և ատեն մը Ազգային Հիվանդանոցի բժշկապետություններ վարած։ 1854-ին ֆրանսերեն լեզվով լույս ընծայած է «La Turquie médicale» խորագրով երկը, որ իր առջև բացած է Ֆրանսայի բժշկական ակադեմիայի դռները։ Պեյրան հեգինակած է բժշկական բազմաթիվ ուսումնասիրություններ ֆրանսերեն լեզվով և ատեն մրն ալ դասախոս եղած է Փարիզի գործնական վարժարանին (Ecole pratique)[13]։

Հովսեփ Պեյրան «դոկտոր բժշկության Փարիզի ֆակուլտեին և նախկին բժշկապետ Պոլսո ծովային նախարարության հիվանդանոցին», ինչպես կստորագրե ինք, 1855-ին Փարիզի մեջ լույս ընծայեց ֆրանսերեն գիրք մը ևս[14], նվիրված գլխավորապես Թուրքիո մեջ փորձվող բարեկարգությանց և այդ առթիվ Ռեշիդ փաշայի թափած ջանքերուն։

Հովսեփ Պեյրան, խոսելով այն թուրք պետական գործիչներուն մասին, որոնք ասպարեզ եկան Հյուլհանեի խաթիր Հյումայունեն հետո, անոնց մեջ պատվո տեղը բնականաբար Մուսթաֆա Ռեշիդ փաշային կուտա, որ ոչ միայն դրդիչն էր եղած բարենորոգությանց այդ հրովարտակին, այլև գլխավոր խթաններեն մեկը՝ կյանքի կոչելու համար զանոնք։

«Ռեշիդ փաշա, որ երկար ատեն Փարիզ բնակեցավ,— կգրե Պեյրան,— իր հետ իր երկիրը բերավ նոր գաղափարներ և բնտիր ճաշակի ձևեր, որոնք զինքը ականավոր դիվանագետ մը կկացուցանեին։ Դժբախտություն է, որ հակառակ իր անժխտելի ձիրքերուն... այս նախարարը անընդհատ անդամալուծվի իր գործերուն մեջ և ստիպվի պայքարել ընդդեմ առավել կամ նվազ բուռն և առավել կամ նվազ վարագուրված հարձակումներուն, զորս իր հակառակորդները կուղղեն իրեն դեմ»[15]։

Ռեշիդ փաշայի գործով հմայված հայ երիտասարդության մաս կկազմեր նաև Հակոբ Մելիքը, որ ճարտարապետություն ուսած էր Ռեշիդ փաշայի Փարիզի դեսպանության օրերուն և որ պիտի գար հետո հաստատվիլ Բուխարեստ՝ ականավոր դեմք մը դառնալու համար ռումանական կյանքի մեջ, մասնակցելով նույնիսկ 1848-ի հեղափոխության։ Հակոբ Մելիք հետագայի Թուրքիո գործերուն նվիրված իր գրքին մեջ զոր հիշատակեցինք արդեն և ուրկե մեջբերումներ ալ բրինք, կխոսի Ռեշիդ փաշայի հոգածության մասին ալ դեպի Փարիզի օսմանցի ուսանողները, որոնց կարգին նաև հայերը[16]։

Մուսթաֆա Ռեշիդ փաշա մասնավոր համակրություն տածած պետք է ըլլա ինքն ալ դեպի Հակոբ Մելիքը։ Իր ջերմ մեկ հանձնարարականովն է արդարև, որ Մելիք Փարիզեն մեկնած է Բուխարեստ, այնտեղ սկսելու համար ճարտարապետական իր ասպարեզը։ Հակոբ Մելիքի թուղթերուն մեջ գտանք Ռեշիդ փաշայի կողմե 1844 նոյեմբեր 21 թվականով Վալախիո իշխան Գյորգի Տիրեսքուի ուղղված այդ գիրը, ուր թուրք դեսպանը կմատնանշե «մեծ հառաջդիմություններ զոր Մելիք բրավ Փարիզի մեջ՝ հարգանքը շահելով իր բոլոր պրոֆեսորներուն, որոնք կշահագրգռվեին իրմով որքան իր իմացականության, նույնքան և իր ցույց տված ճարտարության և պատվավորության համար»[17]։

---

13 Հրանտ Ասատուր, Ընդարձակ օրացույց, Կ. Պոլիս, 1901, էջ 257։

14 Joseph Beyran, Notice sur Turquie, Paris, 1855.

15 Նույն տեղում, էջ 40—41։

16 Հ. Մելիք, Նշվ. աշխ., էջ 38։

17 Տեսնել մեր անտիպ աշխատությունը՝ «Հայերը 1848-ին Արևելյան Եվրոպայի մեջ»։

Հակոբ Մելիքի կապերը հետագային ալ սերտ պետք է մնացած ըլլան Մուսթաֆա Ռեշիդ փաշայի հետ։ Այդ կապերուն շնորհիվ էր, որ Մելիքը պիտի կարենար ի նպաստ ռումին ազգային դատին աշխատիլ՝ երբ Թուրք գրավման բանակները Բուխարեստ կուգային 1848-ին, այնտեղ պայթած հեղափոխությունը դսպելու։ Գրավման բանակներու հրամանատար Այուկեյման փաշայի և իր հայ բարեկամ Անտոն Թրնկրրի բարյացակամ վերաբերումը ռումին ժողովրդի ազգային բաղձանքներուն հանդեպ, Հակոբ Մելիքի բան մը կպարտի և այդ շնորհիվ Ռեշիդ փաշայի հետ անոր ունեցած կապերուն, որոնցմե անտեղյակ չէին Ռումանիա եկող Թուրք պատվիրակները։

Թուրք պետական մեծ մարդուն հետ իր ունեցած սիրալիր հարաբերությանց շնորհիվ էր դարձյալ, որ Մելիքը հաջողեցավ ի նպաստ ռումին շահերուն աշխատել օսմանյան մայրաքաղաքին մեջ ալ, երբ այնտեղ եկավ ապաստանել ռումին հեղափոխական մյուս դեմքերուն հետ մեկտեղ 1848-ին հեղափոխության ձախողանքեն ետք։ Մելիքի արխիվին մեջ փաստաթղթեր կան այն միջնորդությանց մասին, զոր Հայազգի ճարտարապետը կատարեց Պոլսո մեջ ի նպաստ ռումին ժողովրդի ազգային բաղձանքներուն, զորավիգ հանդիսանալով այնպիսի հեղափոխության պետերուն, որպիսիք էին Բրլչեսքուն, Մագերուն, Թելը, Բոլեսքուները և այլն։

Պետք է շատ ուշագրավ եղած ըլլա Հակոբ Մելիքի վայելած հեղինակությունը Մուսթաֆա Ռեշիդ փաշայի մոտ, որպեսզի տարագրության մեջ գտնվող ռումին հեղափոխականները անոր միջնորդությանը դիմեն փոխել տալու համար Վալահիո իշխանը։ Մեր ձեռքին տակ ունենք Ք. Ա. Ռոսեթթիի Փարիզեն Պոլիս՝ Հակոբ Մելիքի ուղղած 1854 օգոստոս 14 թվակիր նամակը, որով Մելիքին կխնդրե անհրաժեշտ ձեռնարկներն ընել Ռեշիդ փաշայի մոտ իշխանությունեն հեռացնելու համար Շթիրբեյը և անոր տեղ երկրին գլուխը բերելու համար, օրինակ, Գոլեսքու եղբայրներեն մեկը։

Նկատի ունենալով բոլոր այս պարագաները, շատ ալ բնական է, որ Հակոբ Մելիք այնքան բացառիկ ջերմությամբ արտահայտվի Մուսթաֆա Ռեշիդ փաշայի մասին, ինչպես ան բազմիցս կրնե իր վերոհիշյալ դիրքին մեջ։ Այդ գրքին հազվագյուտ մեկ օրինակը գտած ենք իր արխիվին մեջ, անոր զանազան էջերուն վրա ուղղումներ կատարած է իր իսկ ձեռքով։

Ինչպես Հակոբ Մելիք կակնարկե իր գրքին մեջ, Փարիզ լեցուն էր հայ ուսանողներով Մուսթաֆա Ռեշիդ փաշայի դեսպանության տարիներուն՝ 1834-ին, 1839-ին, 1841-ին, 1844—1845-ին։ Այս վերջին դեսպանության ատեն է մանավանդ, որ Փարիզի հայ ուսանողներուն թիվը ստվար եղած է։

Փարիզի «Մասյաց աղավնի» հանդեսը 1855-ին[18], կթվե անունները խումբ մը հայերու, որոնք անցյալ դարու կեսերուն ուսում առին Ֆրանսայի մայրաքաղաքին մեջ և հետագային հանդիսացան կարկառուն դեմքեր։ Այդ դեմքերուն կարգին հիշված են Սերորբ Վիշենյան (Սերվիշեն), Գասպար Սինապյան, Հովսեփ Պեյրան, Նահապետ Ռուսինյան, Միքայել Խորասանճյան, որոնք ականավոր դարձան իբրև բժիշկ, Գրիգոր Ադաթոն, Գեորգ Սթիմարաճյան, Հակոբ Ամասյան, Հովհաննես Թյուլսյուզյան, Տատյան եղբայրներ, որոնք հետևեցան գիտական ասպարեզներու, Նիկողոս և Սարգիս Պալյանները, Պիլեզիքյան եղբարք, Աբրահամ Սագայան, որոնք հռչակվեցան արվեստներու մեջ, Հովսեփ

18 Ա տարի, 1855, հունիս, էջ 124։

Շիշմանյան (Մերենց), Ստեփան Ոսկան, Կարապետ Յութիճյան, Ճանիկ Արամյան, որոնք իրենց թանկագին նպաստը բերին հայ դպրության և ուրիշներ։ Հիշված է նաև ճարտարապետ Հակոբ Մելիքը։

Ռեշիդ փաշա քաջալերած պետք է ըլլա հայ երիտասարդները, որոնք ուսանելու կերթային եվրոպական ոստաններու մեջ։ Այդ երիտասարդներեն շատերը հետագային դեր պիտի կատարեին թուրք պետական կյանքի մեջ ալ, առանց մոռնալու անշուշտ իրենց սեփական ժողովուրդը։

Գեորգ Սթիմարաձյան, օրինակ, որ 1821-ին ծնած Պոլիս, հաճախած էր Սեն-Բենուա վարժարանը և հմտացած իր մայրենի լեզվեն զատ թուրքերենի, ֆրանսերենի, անգլերենի, իտալերենի և գերմաներենի ևս, 1841-ին Փարիզի օսմանյան դեսպան Ռեշիդ փաշայի թարգման անվանվելով Պոլսեն կմեկնի Փարիզ։ Ֆրանսայի մեջ 1843-ին կսկսի հետևել Գրինյոնի երկրագործական վարժարանի դասերուն և շրջանավարտ ըլլալե հետո 1845-ին ատեն մը կծառայե Փարիզի օսմանյան դեսպանատան մեջ և նույն տարին կդառնա Պոլիս. հավանաբար Ռեշիդ փաշայի հետ մեկտեղ, որ այդ տարին արտաքին գործերու նախարար անվանված էր։

Գրիգոր Ադաթոն ևս (1825—1868), որ հետագային ուշագրավ դեմք պիտի հանդիսանար Պոլսո հայ կյանքին մեջ իր ունեցած գործունեությամբ և իր վարած պետական պաշտոններով, Ռեշիդ փաշայի իրը դեսպան Փարիզ գտնված օրերուն, այն է՝ 1843—1845, հետևած է Գրինյոնի երկրագործական վարժարանին, զոր ավարտած է շատ հաջող կերպով։ Այդ առթիվ է, որ Ռեշիդ փաշա զայն կներկայացնե Ֆրանսայի Լուի-Ֆիլիպ թագավորին, որ իրեն սեղանակից կրնե ըլլալ և կանվանե «Թուրքիո երկրագործական ապագա մեծ գործիչը»[19]։ Բրավ ալ, Ադաթոն երկրագործության նախարար եղավ հետագային, առաջին հայ նախարարը օսմանյան կայսրության մեջ։

Ռեշիդ փաշայի Փարիզի դեսպանության տարիներուն Ադաթոնեն և Սթիմարաձյանեն զատ Գրինյոնի երկրագործական վարժարանին մեջ ուսավ նաև Հակոբ Ամասյան, որ իր Պոլիս դարձին, նույնպես աչքառու դեր կատարեց պետական թե ազգային կյանքի մեջ, ինչպես շատերը՝ Ֆրանսա ուսում առած այս հայ երիտասարդներեն, որոնք պիտի գային բացառիկ դեր ստանձնել վերածնունդի այն մեծ ճիգին մեջ, որով պիտի բռնկեր Պոլիսը անցյալ դարու կեսերուն։

Թուրք պետական մյուս մարդոց նման՝ Ռեշիդ փաշա ևս իր շուրջն ուներ ծործի հայ մարդիկ ևս։ Հիշենք առաջին հերթին Մկրտիչ Ճիզայիրլի ամիրան որ սեղանավորն էր փաշային։ Ճիզայիրլի չուզեց սովորական սեղանավորի մը դերին մեջ ամփոփել իր եռանդը։ Ան ձեռնարկեց հանձանձելու մաքսերու մենաշնորհը առուրդներու մեջ կրկնապատկելով, երբեմն եռապատկելով հանձանձման տարեկան սակը։ Կառավարությունը, զոր այդ միջոցին կգլխավորեր Մուսթաֆա Ռեշիդ փաշան, խրախուսեց անոր այս փորձերը, որոնք պետական եկամուտները կաճեցնեին այնպիսի պահու մը, երբ պետությունը որևէ ատենե ավելի կարիք ուներ բացառիկ հասույթներու, կարենալ դիմագրավելու համար ռեֆորմներու նյութական պահանջները։

Գործունեության ինչպես և փառքի ու հարստության նոր ասպարեզ փրնտռելու իր այս ճիգը բնականաբար իր գեմ թշնամիներ պիտի ստեղծեր. իր դեմ

19 Կ. Զարդարյան, նշվ. աշխ., էջ 94։

պիտի լարվեին նախ բոլոր անոնք, որոնց ձեռքեն կախեր մենաշնորհը և որոնք փոքր գումարներով ապահոված դայն իրեն՝ մեծ շահերու միջոց էին դարձուցած։ Իրեն դեմ պիտի ճակատեին պետական այն մարդիկը ևս, որոնք թշնամի էին Ռեշիդ փաշային և անոր ջատագոված ռեֆորմներուն և որոնք Ճիգայիրլիին հարվածելով հարվածած պիտի ըլլային նաև Ռեշիդը, զոր պաշտպանը կնկատեին հայ ազգանավորին։

1852-ի օգոստոսին մեծ վեզիրի պաշտոնեն հրաժարած էր Ռեշիդ և անոր տեղ իշխանության եկած նախ Մեհմեդ Էմին Ալի փաշա՝ կարճ ատենվան մը համար և հետո Մեհմեդ Ալի փաշան, սուլթանին փեսան և Ռեշիդի ուխտյալ թշնամին։ Ճիգայիրլին այլևս պաշտպան չուներ։ Անոր գործառնության մեջ անկանոնություններ կասկածված ըլլալու պատրվակին տակ ձերբակալվեցավ ամիրան, հանձնաժողով կազմվեցավ երևան հանելու համար այդ անկանոնությունները, 121 միլիոն զրուշ բացի մը համար գրավվեցան և աճուրդի հանվեցան անոր գույքերը, որոնք 179 միլիոն լարժեին[20], իսկ Մեհմեդ Ալի փաշան հակառակ ամեն կողմե եղած միջամտություններու և հակառակ նույնիսկ սուլթանին հրամանին ի նպաստ անոր արձակման, հաջողեցավ դայն բանտը պահել՝ անկե կորզելու համար իր ցանկացած դրությունները և ի վերջո մոխիրի վրա նստեցնել ամենեն փարթամը հայ ամիրաներուն, որ ոտքի կանգնելու հուսահատ փորձերե հետո իր աչքերը կփակեր 1861 ապրիլ 1-ին թշվառության մեջ։

Ճիգայիրլիի կրած հարվածը չէր կրնար չանդրադառնալ նաև Ռեշիդին։ Անոնք փոխադարձաբար իրարու զոհ են։ Պատուհասը, որ ջախջախեց ամիրան, անշուշտ ուներ իր պատրվակները։ Օրվան պայմանները իր նյութական գործառնություններուն վնասած էին, բայց զանոնք կարգի դնելու միջոց չտված իր և Ռեշիդ փաշայի հակառակորդները առիթը պատեհ սեպեցին վրեժ առնելու մեկեն և մյուսեն։

Հատորի մը մեջ[21], ուր թուրք հեղինակ մը Ռեշիդ փաշայի քաղաքական գրությունները ամփոփեց, Ռեշիդ փաշայի կողմե գրված երեք նամակներ կան, որոնք Ճիգայիրլիի խնդիրը կշոշափեն։ Այդ գրություններուն մեջ Ռեշիդ փաշա, առանց արդարացնելու Ճիգայիրլին իր գործունեության մեջ ցույց տված անփութության կամ անխոհեմության համար, կրսե այնուամենայնիվ, թե անոր բացը հեռու էր եղերական պատկեր մը ներկայացնել, թե ան փոխարեն հսկայ գույք ալ ուներ, թե այդ բացը չէր կրնար պղտի մատնել պետությունը, թե այդ կարգի դրամական վնասներեն ավելի հոռի մատակարարությունն է, որ կարվածե պետությունը։ Ռեշիդ փաշայի այդ գրություններեն կիմանանք, որ հակառակ իր ջանքերուն դժբախտաբար չէ կրցած կարգադրել Ճիգայիրլիի բացը և հետևաբար անոր գույքերը հարքունիս գրավված են, թե ելևմտական նախարարությունը իրմե՝ Ռեշիդ փաշայեն ալ 1016 քսակ և 330 զրուշ գումար մը պահանջած է իբր պատասխանատու, թե վերջապես փորձեր եղած են եղանակ մը գտնել բացը գոցելու համար և թե այդ բանին իր աջակցությունը բերած է սարրաֆ խոջա Մաքսուտը (Մաքսուտ ամիրան)։

---

20 Հ. Մելիք, նշվ. աշխ., էջ 128—129։

21 Սաֆիյե սուլթան զադե Մեհմեդ Սելահեդդին. Բիր թյուրք դիպլոմատերն եվրակը սիյասիրեսի (թուրք դիվանագետի մը քաղաքական գրությունները), Կ. Պոլիս, 1889։

Ավելցնենք, որ սույն Մաքսուտ ամիրան ևս մեկն էր այն հայ սեղանավորներուն, զորս իրենց շուրջն ունեցան թուրք վարիչները բլլա պետական, բլլա իրենց անձնական կարիքներու վայրկյանին։ Ռեշիդ փաշայի կյանքին խառնված այդ հայերու կարգին կգտնենք վերջապես ուրիշ համբավավոր հայ սեղանավոր մը՝ Միսաք ամիրան։ Մուսթաֆա Ռեշիդ փաշայի ստորագրությամբ 1845 դեկտեմբեր 18 թվակիր մուրհակ մը մնացած է, որով Ռեշիդ կհայտնե, թե հաշվեհակի ենթարկելով իր և սեղանավոր խոջա Միսաքի գործառնությունները, 1 միլիոն 550 հազար ղրուշի գումար մը դեռ պարտական կմնա անոր, որուն համար հանձն կառնե մեկ քսակին 4 ղրուշ տոկոս վճարել[22]։

Մեջիդի օրով դեռ իրենց փառքին մեջ էին հայ ամիրաները և անոնցմե շատերը գործերով ալ կապված էին արքունիքին հետ։ Մ. Օրմանյան կգրե. «Ապտյուլ Մեճիդ կայսր Հովհաննես և Պողոս Տատյան վառոդապետներու և Կարապետ Պալյան ու Հովհաննես Սերվերյան ճարտարապետներու, ֆես կոչված կարմիր գլխանոցին վրա կրվելիք ոսկե թուղրայի շքանշանն ալ շնորհած էր 1844 ապրիլ 1-ին, որ ևս քան զևս կբարձրացներ անոնց ազդեցությունը։ Հատուկ պատվասիրության նշավակ եղավ նաև վերոհիշյալ չորս ամիրաները և Կարապետ ու Հակոբ փողերապետները իրեն ուղեկից առնելը, երբ 23-օրյա պտույտ մը կատարեց 1844 մայիսի մեջ Նիկոմեդիո ասվի գործարանը և Բրուսայի հանքային ջուրերը և Դարդանելի նեղուցեն դուրս մինչև Միտիլլի կղզին։ Երկու տարի հետո, այն է 1846-ին, Մեջիդ անձամբ ալ պատված է Տատյանց բնակարանը[23]։

Սուլթան Մեջիդի էդիրնե այցը ևս քիչ հետո առիթ տված է անոր հայերու հետ շփում ունենալ։ «Յետ չորից աւուրց,— կգրե ժամանակակից պատմիչը,— եկեալ անտի գնաց յԱդրիանապօլիս և զգեցոյց առաջնորդին Հայոց Սարգսի արքեպիսկոպոսի զվերարկու պատուոյ և ետ նմա նշան ազամանդեայ և եկաց աւուրս երկուս ի տան Հովհաննու Պարտիզպանյան և ետ նմա ևս նշան ականակուռ և եղբարց և քեռարց նորա»[25]։

* * *

«Գյուլհանեի խաթթը Հյումայունը,— կրսե ֆրանսացի պատմագիր մը,— զեշ կերպով գործադրված էր։ Իսլամներու և ռայաներու միջև հավասարությունը բնավ չէր ապահովված։ ...Տուրքերու հավաքման նախկին հոռի դրությունը դարձած էր ետ, միշտ կամայական, առավելապես ծանրացած միշտ քրիստոնյաներու վրա, հարստահարություններով և բռնություններով միասին, նահանգներու կառավարիչները շատ զեշ կերպով կընտրվեին միշտ, սուլթաներ ժամանակ կամ ուժ կամ թե կամք չէր ունեցած փոխելու անոնց ավարառուի և բռնապետի դարավոր սովորությունները։ Դուռը հոռի կերպով կերաշխավորեր կյանքի, պատվո և ինչքի ապահովությունը իր քրիստոնյա հպատակներուն»[26]։

Նահատակության դեպքեր ալ եղան նույնիսկ Պոլսո մեջ, նույնիսկ թանզիմաթի մեղրալուսնի օրերուն։ Եղերական դեպք մը, որ պատահեցավ այդ

---

22 Ենշատ Քայնար, Մուսթաֆա Ռեշիդ փաշա վե թանզիմաթ, Անքարա, 1954, էջ 619։

23 Մ. Օրմանյան, Ազգապատում, Գ, էջ 3794։

24 Ավետիս Պերպերյան, Պատմություն հայոց, էջ 375—376։

25 Նույն տեղում, էջ 316։

26 Եղվարդ Դոիո, Արևելյան խնդիրը և հայկական հարցը, Կ. Պոլիս, 1913, էջ 291։

օրերուն, պիտի գար ծիծաղել միամտությանը վրա բոլոր անոնց, որոնք կարծեր էին, թե թանզիմաթը երկրին մեջ բան մը փոխած է։

Հովակիմ Թավուքճյանի դեպքն էր սա։

Սամաթիացի երիտասարդ մըն էր Հովակիմ, որ հանկարծական մղումով մը իսլամությունը ընդունած էր 1839-ին, հետո զղջացած և քրիստոնեության դարձած էր գաղտնի, ջանալով հետը կորսնցնել։ Ձեռք անցած սակայն իվերջո 1843-ի վերջերը, բռնությանց ենթարկված էր իսլամության գիրկը դառնալու համար կրկին, բայց մնացած էր անհողդողդ։ Պատրիարքարանը քաջություն չուներ Բ. Դուռ բողոքելու. իսլամության օրենքը բացարձակ էր. քրիստոնյան իսլամանալե հետո իրավունք չուներ իր հին կրոնքին վերադառնալու։ Ազգային իշխանությանց միակ հանգստությունն այն եղավ, որ Ռուսիո դեսպանին դիմեց և անոր խորհուրդով նաև անգլիական դեսպանին, որ լորդ Քաննինգն էր։ Անգլիո դեսպանին բողոքը Բ. Դռան մոտ որևէ օգուտ չունեցավ, սակայն մեծ վեզիր Ռիուֆ փաշան չկրցավ ազդել Շեյխ-ուլ-իսլամին վրա. խեղճ տղան դատվեցավ, դատապարտվեցավ մահվան և գլխատվեցավ 1843 օգոստոս 17-ին, Գյուլհանի կատաղախաղեն ոչ իսկ չորս տարի հետո։

Օրմանյան, որ առհասարակ մեկն էր թանզիմաթի շրջանը գերագնահատողներեն, արձանագրելով բոլոր այս «փոփոխությունները», կեղրակացնե. «Հովակիմ Թավուքճյան նահատակին անունը կապված է այդ բարեհաջող փոփոխությանց հետ, իբրև սկզբնապատճառ կրոնից ազատության սկզբունքին ընդարձակվելուն և շատ մը անախորժ եղելությանց դադրելուն և իբրև վերջին նահատակ և իբրև վերջին զոհ իսլամական անողոք օրենքին»[27]։

Օրմանյան իր երկը հորինել սկսելե առաջ Համիդի սարքած նախճիրներն ալ տեսեր էր ավաղ, ու երբ կշարադրեր նույն այդ տողերը, հայաջինջ սարսափները տեղի ունեցեր էին իրենց բոլոր զարհուրանքներով...

Ո՛չ, Հովակիմ վերջին նահատակն ու վերջին զոհը չէր...

Թանզիմաթը եկեր էր հավատացնելու աշխարհին, թե վերջ է գտած այն դրությունը, որ օսմանյան պետության ժողովուրդները երկու դասի կբաժներ տերերու և ծառաներու, և հռչակելու հանդիսավորապես, թե այլևս հավասար են բոլորը օրենքին առջև ինչպես իրենց պարտականությանց, նույնպես իրենց իրավունքներուն մեջ։ Գյուլհանեի պարտեղին մեջ ի լուր աշխարհի տրված այս խոստումները հեգնանք մը պիտի կազմեին, ավաղ, պատմության համար։

Երկրի մը մեջ, ուր ամբողջ հինգ գար տերեր և ռայաներ միայն եղեր էին, ավելի բան ցնորք մըն էր հավատալ, թե օրենքին առջև հավասար կրնար դառնալ ամեն մարդ։ Եթե աշխարհը խաբելու համար հորինված կեղծիք մը չէր, գոնե ծիծաղելի միամտություն մըն էր թանզիմաթի հեղինակներուն կողմե կարծել, թե սուլթանին թուղթեն զետեղելով հրամանի մը ճակատ՝ կիրարկության կրնա դրվել ան։

Պատրանք էին հայուն երազները՝ իր վերելքը ապահովելու օսմանցիի պատմուճան հագած։ Այդ պատմուճանը պիտի չշնորհվեր երբեք իրեն՝ ինչ բրտինք ալ թափեր այս երկրին համար, հավատարմության ինչ հավաստիք ալ տար։

27 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 3797։

ТАНЗИМАТ И АРМЯНЕ

Проф. А. Ч. СИРУНИ (Бухарест)

(Резюме)

Вступив в 1839 г. на турецкий престол, султан Меджит через несколько месяцев обнародовал Танзимат и обещал путем ряда реформ вывести страну из тяжелого экономического и политического положения. Эта попытка встретила упорное сопротивление со стороны реакционных военно-феодальных и религиозных сил и практически не внесла каких-либо изменений в жизнь турецкого и других народов Османской империи.

Отмечая внутренние и внешние причины, связанные с Танзиматом, и рассматривая борьбу, развернувшуюся вокруг него, автор вместе с тем показывает отношение армян к Танзимату, роль армянских общественно-политических деятелей в принятии Танзимата и беспочвенность иллюзий, вызванных им.